# ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտները հայոց լեզվի ուսուցման միջոցով հնարավորություն կունենան ամրապնդել իրենց կապը հայկական ժառանգության հետ՝ ուսումնասիրելով նրա մշակութային ոլորտները, ինչպիսիք են հայոց պատմությունը, կրոնը, գրականությունը, արվեստը և երաժշտությունը:

## ՏԵՍԼԱԿԱՆ

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ Վարժարանն իր հայագիտական ծրագրով աջակցում է հայ հավատքի, լեզվի և մշակույթի պահպանմանը և պատրաստում է համայնքի ապագա ղեկավարներ, ովքեր հպարտանում են իրենց հայկական ժառանգությամբ և հայ համայնքի ներսում ու հասարակության լայն շրջանակներում կատարում են արժեքավոր ներդրումներ:

## ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ*

1. Աշակերտները պետք է հարգեն ուսուցիչներին/դպրոցի անձնակազմին, օգնականներին, կամավորներին և ենթարկվեն դպրոցի կանոններին ու կանոնակարգին:
2. Աշակերտները պետք է հարգեն իրենց դասընկերներին և լավ վերաբերվեն միմյանց: Բռնարար վարքագիծը (ֆիզիկական/ ոչ ֆիզիկական) անհանդուրժելի է:
3. Աշակերտները պետք է պահպանեն դպրոցի և իրենց մասնավոր գույքը: Նրանք պետք է ձեռք չտան/չօգտագործեն ''Forest Manor'' դպրոցի գույքը, այլ օգտագործեն միայն իրենց անձնական կամ ուսուցչի տված դպրոցական պարագաները/գրենական պիտույքները: Դպրոցական ունեցվածքի ոչնչացումը, վանդալիզմն անհանդուրժելի են և կարող են հանգեցնել դպրոց հաճախելու ժամանակավոր դադարեցմանը կամ դպրոցից հեռացմանը:
4. Այն աշակերտները, ովքեր չեն համապատասխանի վերը նշված պահանջներին՝ կստանան “Incident Report”, որտեղ կներկայացվի աշակերտի վարքը, ուրիշների վրա նրա ազդեցությունը և իրավիճակի շտկման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները: “Incident Report”-ը կլրացվի ուսուցչի /աշխատակազմի/վարչակազմի անդամների հայեցողությամբ և կտրվի ծնողներին:

Ծնողների աջակցությունը շատ կարևոր և գնահատելի է դպրոցի վարքի կանոնակարգը կիրառելու հարցում: Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ Վարժարանի վարչակազմն ու աշխատակազմը խրախուսում են ծնողների ակտիվ ներգրավվածությունն իրենց երեխաների կրթության հարցում:
Մենք խրախուսում ենք ծնողների ակտիվ աջակցությունը, քանի որ նրանց ազդեցությունը վճռորոշ դեր ունի աշակերտների հաջողության գործում:



Վայրը՝ 25 Forest Manor Rd, Toronto, ON M2J 1M4
ArmenianSchool.ca admin@armenianschool.ca principal@armenianschool.ca 416-431-3001

## ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Շաբաթօրյա վարժարանը մեծ հպարտությամբ 8-րդ դասարանի շրջանավարտներին առաջարկում է մասնակցել դեպի Հայաստան ուղևորությանը՝ որպես նրանց կատարած աշխատանքների բարձր գնահատական: **Աշակերտը, շաբաթօրյա վարժարանում իրականացրած իր աշխատանքով պետք է արժանի լինի և արտոնություն ստանա մասնակցելու այս ուղևորությանը:**

Դպրոցն իրավունք ունի որոշելու Հայաստան մեկնելու աշակերտների ցանկը և կարող է մերժել այն աշակերտներին, ովքեր դպրոցի կարգապահական ընթացակարգերին և 8-րդ դասարանն ավարտելու սահմանված պահանջներին չեն համապատասխանում: Դպրոցի կրթական պահանջն է հաջողությամբ ավարտել սահմանված ծրագիրը:

Ստորև ընդգրկված են այն պատճառները, համաձայն որոնց աշակերներին ՉԻ թույլատրվում ճանապարհորդել խմբի հետ: Եթե աշակերտները՝

- լավ չեն կատարել ուսումնական պահանջները, դասարանում իրենց լավ չեն դրսևորել տնային հանձնարարությունները, դասարանական աշխատանքները կատարելիս, ստուգարքներն ու քննությունները հանձնելիս,
- մշտապես և հատուկ հսկողության կարիք ունեն,
- շաբաթօրյա դպրոցի կրտսեր և միջին դասարաններում սովորելիս բավարար չափով չեն հետևել Դպրոցի Կանոնակարգին,
- անընդունելի վարքի համար ստացել են բազմաթիվ “Incident Report”-եր և չեն կարողացել շտկել իրենց պահվածքը,
- ժամանակավորապես դադարեցվել է նրանց՝ դպրոց հաճախելը:

Այս ուղևորության մասնակցության վերաբերյալ որոշումները հեշտությամբ չեն ընդունվի: Անհրաժեշտության դեպքում դպրոցի ղեկավարությունն ընթացիկ մտահոգությունների մասին կտեղեկացնի ծնողներին և աշակերտներին, իսկ վերջնական որոշումները կհաղորդվեն ուղևորությունը պլանավորելուց առաջ:

## ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽԵԼՈՒ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազային Շաբաթօրեայ Վարժարանն իրեն իրավունք է վերապահում դադարեցնել որևէ աշակերտի հաճախումը դպրոց: Աշակերտը կարող է հեռացվել դպրոցից հետևյալ պատճառներով .

Ա. Դպրոցի Կանոնակարգի կողմից սահմանված կանոնների բազմակի խախտում,

Բ. Երեխայի կողմից անզուսպ ու ագրեսիվ պահվածք, որը կարող է վնաս պատճառել այլ երեխաներին, դպրոցի անձնակազմին, դպրոցի գույքին:

Այն դեպքում, երբ առկա են վերը նշված իրավիճակները՝ կձեռնարկվեն հետևյալ քայլերը.

1. Առաջին՝ ծնողը/խնամակալը **բանավոր** տեղեկացվում է ստեղծված իրավիճակի մասին և կազմակերպվում է հանդիպում տնօրենի, ծնողների և այլ ներգրավված անձանց միջև: Նրանք միասին քննարկում և որոշում են իրավիճակը հարթելու ուղիները:
2. Այն դեպքում, երբ առաջին հանդիպումից հետո իրավիճակը չի հարթվել, ծնողը/խնամակալը **գրավոր նախազգուշացվում (Incident Report)** և հրավիրվում է մեկ այլ հանդիպման՝ տնօրենի, ներգրավված անձանց հետ: Կրկին առաջարկվում են լուծումներ և տրվում է վերջին նախազգուշացում:



Վայրը՝ 25 Forest Manor Rd, Toronto, ON M2J 1M4
ArmenianSchool.ca admin@armenianschool.ca principal@armenianschool.ca 416-431-3001

3. Եթե իրավիճակը չի փոխվում **վերջին նախազգուշացումից** հետո, ապա աշակերտը հեռացվում է դպրոցից: Ծնողը/խնամակալը որևէ փոխհատուցում չի ստանում գրանցման վճարների համար:

Դպրոցը կկազմակերպի երեխայի դպրոցից հեռացումը՝ համապատասխան երեխայի ընկալման կարողությունների:

## ՀԱՃԱԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Ճշտապահ հաճախումը պարտադիր է: Դպրոցն ամենօրյա հաշվառում է կատարում աշակերտների հաճախման վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում հետևողականորեն տեղեկացնում ծնողներին:

1. Աշակերտները դպրոցում պետք է լինեն առավոտյան ժամը 9:30-ից մինչև 13:30-ը: 13:30-ից շուտ չի թույլատրվում աշակերտին տուն ուղարկել, որպեսզի չխանգարվի դասարանի և դպրոցի աշխատանքը:
2. Հարգելի կամ անխուսափելի բացակայության դեպքում ծնողներն ուսուցչին այդ մասին պետք է զգուշացնեն մեկ օր առաջ:
3. Բացակայության դեպքում աշակերտները պատասխանատու են ուսուցչից ստանալ բոլոր հանձնարարությունները, որպեսզի հաջորդ դասին ներկայանան պատրաստված:
4. Դասերն ավարտվում են ժամը 13:30-ին: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ ծնողները/խնամակալները իրենց երեխաներին **պետք է** ժամանակին վերցնեն, քանի որ դասերի ավարտից հետո երեխաների նկատմամբ հսկողություն չի իրականացվում:
5. Անխուսափելի ուշացման դեպքում ծնողները/խնամակալները պետք է զանգահարեն ուսուցչին կամ դպրոցի տնօրինությանը:

**Աշակերտի անունը և ծնողների հեռախոսահամարները պետք է գրված, փակցված լինեն երեխաների պայուսակներին և ուտելիքի համար նախատեսված փոքրիկ պայուսակներին:**

## ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

Բոլոր աշակերտները պետք է կրեն դպրոցի համազգեստը: Համազգեստը կարող եք ձեռք բերել դպրոցից՝ 35$-ով:

- Կապույտ վերնաշապիկ (դպրոցի լոգոյով)
- Մուգ գույնի վարտիք և մուգ գույնի կոշիկ

★Անձրևոտ և ձյունոտ եղանակին, երեխաները անպայման պետք է հագնեն դպրոցի ներսի կոշիկները և խուսափեն դասասենյակներում քայլել թաց կոշիկներով: Մարզասրահում ևս չի կարելի քայլել թաց կոշիկներով:

## ԸՆԿՈՒՅԶԻ/ԳԵՏՆԱՆՈՒՇԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ագային Շաբաթօրեայ Վարժարանում արգելվում է օգտագործել **ընկույզ/գետնանուշ/քնջութի սերմեր**, քանի որ դրանք որոշ աշակերտների մոտ կարող են առաջացնել ալերգիկ երևույթներ: Խնդրում ենք ձեր երեխայի հետ դպրոց ուղարկել այնպիսի սնունդ, որը չի պարունակում վերոհիշյալ մթերքները:

## ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԵՐԻ ՏՈՆՈՒՄ

Արգելվում է դպրոցում ծննդյան տարեդարձեր տոնել: Կարելի է միայն երգով շնորհավորել: Ծնողներին/խնամակալներին չի թույլատրվում դպրոց բերել տորթեր, կեքսեր, քաղցրավենիք հետևյալ պատճառներից ելնելով՝

- Մենք վստահ չենք, որ դրանք չեն պարունակում ընկույզ, գետնանուշ, քնջութի սերմեր:



Վայրը՝ 25 Forest Manor Rd, Toronto, ON M2J 1M4
ArmenianSchool.ca admin@armenianschool.ca principal@armenianschool.ca 416-431-3001

- Տարեդարձի առիթով հյուրասիրությունը ծնողների, աշակերտների միջև մրցակցություն է առաջացնում:
- Աշակերտները վատ են զգում, երբ իրենց ծնողները հյուրասիրություն չեն կազմակերպում դպրոցում, կամ էլ իրենց ծննդյան օրերն ուսումնական տարվա ընթացքում չեն:
- Տարեդարձի հետ կապված իրարանցումը խանգարում է դասի բնականոն ընթացքին:
- Այդ իրադարձությունն ուսուցիչների համար ավելորդ աշխատանք է ստեղծում:

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը հյուրասիրություն կկազմակերպի և ոչ մի աշակերտ անտեսված չի մնա:

## ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ ԵՎ ԱՅԼ ՍԱՐՔԵՐ

- Աշակերտներին թույլատրվում է ունենալ բջջային հեռախոսներ, iPod-ներ և այլ սարքեր, բայց դրանք դասի ժամանակ պետք է լինեն պայուսակում՝ անջատված վիճակում:
- Դասի ժամանակ չի թույլատրվում իրականացնել ելքային և մուտքային զանգեր, գրել և ստանալ հաղորդագրություններ, խաղալ խաղեր, օգտվել ինտերնետից, ստանալ էլեկտրոնային նամակներ կամ պատասխանել դրանց:
- Այս կանոնների խախտման դեպքում հեռախոսներն ու այլ սարքերը կառգրավվեն և կվերադարձվեն միայն դասերի ավարտից հետո:
- Դպրոցը/աշխատակազմը պատասխանատվություն չի կրում դպրոց բերված բոլոր էլեկտրոնային սարքերի կորստի կամ դրանց վերանորոգման համար:
- Աշակերտներին թույլատրվում է օգտագործել իրենց էլեկտրոնային սարքերը դասից դուրս՝ ընդմիջման/նախաճաշի ժամանակ: Ոչ պատշաճ օգտագործման դեպքում ուսուցիչը կամ աշխատակազմի անդամները կարող են արգելել այդ սարքերի օգտագործումը:

## ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Դպրոցը քաջալերում է կամավոր դառնալ դպրոցի շրջանավարտներին, ինչպես նաև այն ծնողներին, ովքեր գրանցում են իրենց երեխաներին Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազային Շաբաթօրեայ Վարժարան:

- Մեր կամավորների հմտությունները և գիտելիքները կօգնեն հարստացնել մեր կրթական ծրագրերը,
- թույլ կտան և կխրախուսեն մեր ծնողներին ներգրավվել իրենց երեխաների կրթության մեջ,
- կօգնեն բարելավել կապը ծնողների և ուսուցիչների միջև,
- կաջակցեն դպրոցի նպատակների և խնդիրների իրականացմանը:

Միասին մենք կարող ենք օգնել պահպանելու, հարստացնելու հայկական ժառանգությունն ու մշակույթը:

*** Խնդրվում է ստորագրել և հետ վերադարձնել**
**ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**



Վայրը՝ 25 Forest Manor Rd, Toronto, ON M2J 1M4
ArmenianSchool.ca admin@armenianschool.ca principal@armenianschool.ca 416-431-3001

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ Վարժարան
St. Sahag & St. Mesrob Armenian Saturday School

Վայրը՝ Forest Manor Public School – 25 Forest Manor Rd, Toronto, ON M2J 1M4
Հասցե՝ 920 Progress Avenue, Scarborough, ON, M1G 3T5
ArmenianSchool.ca admin@armenianschool.ca principal@armenianschool.ca 416-431-3001

# ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

☐ Ծանոթացա և համաձայն եմ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ Վարժարանի Վարքի Կանոնակարգին, դրա բոլոր ենթաբաժիններին:

| | |
|---|---|
| Աշակերտի անուն և ազգանուն՝ | Դասարան՝ |
| Աշակերտի ստորագրություն՝ | Ամիս, ամսաթիվ՝ |
| Ծնողի/խնամակալի ստորագրություն՝ | Ամիս, ամսաթիվ՝ |